ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 27.11.2019թ. ԹԻՎ 1022-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

09 հունվարի 2020թ,
ժամը 09:30

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գուրգ Սիմոնյան — տեխնիկական ապահովման տնօրեն

**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝**

Լևոն Սարգսյան — դիտարկման ծառայության պետ

**Հանձնաժողովի բացող անդամներ՝**

Վրեժ Ասրյան — օդային երթևեկության կառավարման տեխնիկական կենտրոնի ղեկավար

Արթուր Սիմոնյան — բազմադիրքային դիտարկման համակարգի կենտրոնի ղեկավար

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Մարիամ Եսայան — իրավապայմանագրային և գնումների բաժնի մասնագետ

Հանձնաժողովի անդամ Ս.Բաղդասարյանը գտնվում էր գործուղման մեջ և նիստին չմասնակցեց:
Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը ՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)՝

| Հ/հ | Անվանում | Գին |
|---|---|---|
| 1 | Ռադիոտեղորոշիչ սարքավորումներ | 400.000.000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ |

Հրապարակվեցին www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և էլ.փոստի հասցեն՝
«ERA a.s», p.vatasek@era.aero
«ՀԱՆ-ԲՄԱՊՁԲ-04/19» ծածկագրով բաց ընթացակարգի՝ մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերի պահանջներին:
**Ընդունվեց որոշում՝ կողմ՝4, դեմ՝0**
Հայտարարվեց մասնակցի գնային առաջարկը՝
«ERA a.s»՝ **750 000 (յոթ հարյուր հիսուն հազար) Եվրո**:
Մասնակցի գնային առաջարկ 09.01.2020թ. ՀՀ ԿԲ կողմից հաստատված փոխարժեքով (534.16) կազմում է **400 620 000 (չորս հարյուր միլիոն վեց հարյուր քսան հազար**) ՀՀ դրամ:
Հանձնաժողովը արձանագրեց,որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է այդ գնումն իրականացնելու համար Ընկերության կողմից նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Կասեցնել նիստը և «ERA a.s»-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, որոնք տեղի կունենան 13.01.2020թ. ժ.10.30-ին, ք.Երևան, Ի. Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ հասցեում:

Գուրգ Սիմոնյան

Վրեժ Ասրյան

Լևոն Սարգսյան

Արթուր Սիմոնյան

Մարիամ Եսայան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2.1
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 27.11.2019թ. ԹԻՎ 1022-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

10 հունվարի 2020թ,
ժամը 10:30

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գևորգ Սիմոնյան տեխնիկական ապահովման տնօրեն

**Հանձնաժողովի բացող անդամներ՝**

Վրեժ Ասրյան օդային երթևեկության կառավարման տեխնիկական կենտրոնի ղեկավար

Արթուր Սիմոնյան բազմադիրքային դիտարկման համակարգի կենտրոնի ղեկավար

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Մարիամ Եսայան իրավապայմանագրային և գնումների բաժնի մասնագետ

Հանձնաժողովի անդամ Ս.Բաղդասարյանը գտնվում էր գործուղման մեջ և նիստին չմասնակցեց:
Հանձնաժողովի անդամ Լ.Սարգսյանը գտնվում էր արձակուրդում և նիստին չմասնակցեց:

**Օրակարգ**

1. Բանակցություններ գների իջեցման նպատակով:
2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որոշում:

Բանակցությունների արդյունքում «ERA a.s», ներկայացրեց վերանայված գնային առաջարկ՝ 748 500 (յոթ հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) Եվրո:
Մասնակցի գնային առաջարկ 10.01.2020թ. ՀՀ ԿԲ կողմից հաստատված փոխարժեքով (532.33) կազմում է **398 449 005 (երեք հարյուր իննսունութ միլիոն չորս հարյուր քառասունինը հազար հինգ**) ՀՀ դրամ:
«ERA a.s», կողմից ներկայացված նոր գնային առաջարկը չի գերազանցում Ընկերության կողմից այդ գնումն իրականացնելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,ուստի

**Հանձնաժողովը միաձայն որոշեց՝**

1. 1-ին զբաղեցրած մասնակից ճանաչել «ERA a.s»-ն:
2. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցնին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը:
3. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցնին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ ներկայացնել սույն ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի ապահովման բնօրինակը:
   **Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:**
4. Հաջորդ նիստը հրավիրել սույն ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում:

Գևորգ Սիմոնյան

Արթուր Սիմոնյան

Վրեժ Ասրյան

Մարիամ Եսայան